



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 դեկտեմբերի 2016 թ.

N 773-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 181-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 և 12 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 և 12 հավելվածների.

2) որոշումը լրացնել նոր՝ NN 13, 14 և 15 հավելվածներով՝ համաձայն NN 13, 14 և 15 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 773-Ն որոշման

«Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի
N 181-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N
ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 56)**

_____ 20 թ

(ծառայության ստորաբաժանման անվանումը) _____ (գտնվելու վայրը) _____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

(անձնական ծածկագիրը) _____ (պաշտոնը) _____ (ազգանունը, անունը, հայրանունը)

(անձնական ծածկագիրը) _____ (պաշտոնը) _____ (ազգանունը, անունը, հայրանունը)

(անձնական ծածկագիրը) _____ (պաշտոնը) _____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ավարտը՝ _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման հիմքը՝ _____
(ստուգման տարեկան ծրագիրը, դիմում-բողոքը և այլն)

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)
(ՀՎՀՀ)

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) _____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի
ազգանունը, անունը, հայրանունը) _____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

(ստուգվող օբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) _____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

Ստուգման հրամանի համարը՝ _____ ամսաթիվը _____

Ստուգման նպատակը (ընդգրկված հարցերի համարները) _____

Տեղեկատվական բնույթի հարցեր		
Հ/Հ	Հարցը	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված և այլն)	
2.	Պետական գրանցման (հաշվառման) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
3.	Պետական գրանցման (հաշվառման) վկայականի համարը	
4.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ	
5.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
6.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ	
7.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության օբյեկտի տեսակները՝ ռեստորաններ, սրճարաններ, բարեր, ճաշարաններ, բուֆետներ, խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ, ինչպես նաև դրանցում իրականացվող սննդի արտադրություններ	
8.	Տնտեսավարող սուբյեկտների և դրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
9.	Հանրային սննդի ոլորտում տնտեսավարող սուբյեկտի գործունեության օբյեկտի տեսակը՝ ռեստորաններ, սրճարաններ, բարեր, ճաշարաններ, բուֆետներ, խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ	
10.	Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
11.	Հանրային սննդի ոլորտում տնտեսավարող սուբյեկտի գործունեության օբյեկտի անվանումը	
12.	Հանրային սննդի ծառայության որ ձևին է պատկանում՝ ռեստորան, հյուրանոց, ճաշարան, արագ սննդի կետ, հյուրատուն, հիվանդանոցի ճաշարան, ծերանոցի ճաշարան, դպրոցի ճաշարան, մանկապարտեզի ճաշարան, բանակի ճաշարան, հյուպերի, թարմ մզված (քամված) հյուպերի և նեկտարների վաճառքի կետ, սրճարան, բար	
13.	Ներդրված որակի կառավարման համակարգը (եթե առկա են ISO 9001, HACCP, ISO 22000, ISO 14000)	
14.	Աշխատողների թիվը	

Վերահսկողական բնույթի հարցեր

Հ/Հ	Հարցերը	Այո	Ոչ	Չ/Պ	Ստուգման եղանակը	Նորմատիվ ակտի համարը	Մեկնաբանություններ
1	2	3	4	5	6	7	8
1.	ՄՊԱՍԱՐԿՄԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԵՆՔԵՐ						
1.1.	Արտադրական, առևտրի, օժանդակ, կենցաղային սենքերը պահվում են մաքուր, նորոգ և պատշաճ վիճակում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 24-րդ կետ	
1.2.	Կառույցում ապահովվում են հիգիենիկ պատշաճ գործելակերպի կանոնները՝ ներառյալ խաչաձև աղտոտումից պաշտպանումը:				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 27-րդ կետ	
1.3.	Արագ փչացող սննդամթերքի բաժիններն ապահովված են սառնարանային սարքավորումներով՝ սննդամթերքի պահանջվող ջերմային ռեժիմում պահման համար				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 61-րդ կետ	
1.4.	Նախատեսված են համապատասխան տարածքներ՝ անհրաժեշտ հարմարություններով՝ աշխատանքային գործիքների և պարագաների լվացման, ախտահանման և պահման համար				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 28-րդ կետ	
1.5.	Վարչատնտեսական, կենցաղային և օժանդակ բաժինները (հատվածները) առանձնացված են սննդամթերքի պահպանման հատվածից				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 25-րդ կետի 1-ին ենթակետ և 26-րդ կետի 6-րդ ենթակետ	
1.6.	Ապահովված է կենցաղային տարածքներով (սանհանգույց՝ ձեռքերի լվացման և ախտահանման համար տեղադրված են լվացարաններ՝ ապահովված հոսող սառը և տաք ջրով, օճառով, էլեկտրաջորացուցիչներով և (կամ) սրբիչով, ախտահանիչ լուծույթով, կախիչներով, հանդերձարան՝ որտեղ հագուստը, սանիտարական հագուստը և կոշիկները պահվում են առանձին)				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետ	
2.	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ՋՐԱՀԵՌԱՅՈՒՄ, ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ						
2.1.	Կազմակերպությունն ապահովված է ջրամատակարարմամբ և ջրահեռացմամբ: Խմելու ջրի անխափան (պահուստային տարողությունների առկայություն) ջրամատակարարմամբ, որը բավարարում է խմելու ջրին ներկայացվող պահանջները և չի պարունակում աղտոտման վտանգ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 47-րդ և 50-րդ կետեր	
2.2.	Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական և (կամ) արհեստական լուսավորվածությամբ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 4-րդ ենթակետ	

2.3.	Ապահովված են բնական օդափոխության պայմաններով և (կամ) արհեստական օդափոխության համակարգերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 3-րդ ենթակետ	
3.	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻՓԻԵՆԱ						
3.1.	Մենդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկվել է նախնական և պարբերական բժշկական զննությունների և ունի սանիտարական գրքույկ				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 56-րդ կետ	
3.2.	Յուրաքանչյուր անձ պահպանում է անձնական հիգիենայի կանոնները և կրում է համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանիչ հագուստ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 54-րդ կետ	
4.	ՄԻՋԱՏՆԵՐԻ ԵՎ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՏԱՐԿՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
4.1.	Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ կենդանիների (ճանճեր, միջատներ, ուտիճներ, վնասատուներ, կրծողներ)՝ սննդամթերքի պատրաստման, մշակման, պահման և տեղափոխման տարածքներ մուտքը կանխելու, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 60-րդ կետ	
5.	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ						
5.1.	Ապահովված են մնացորդների պահման և հեռացման պատշաճ հիգիենիկ պայմաններով՝ աղբարկղեր և աղբի հավաքման համար տեղադրված են անջրաթափանց, կափարիչներով փակվող կուտակիչ տարողություններ և գտնվում են նորոգ վիճակում ու տեղակայված են հնարավորինս պատշաճ հեռավորության վրա				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 44-րդ և 45-րդ կետեր	
6.	ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ						
6.1.	Ապահովված է անհրաժեշտ գույքով և սառնարանային սարքավորումներով՝ կախված սննդամթերքի տեսակից ու քանակից, որոնք պատրաստված են հիգիենայի պահանջները բավարարող համապատասխան նյութերից և պահվում են նորոգ ու բարվոք վիճակում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետ	
6.2.	Սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, ենթարկում են պատշաճ մաքրման ու ախտահանման				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետ	
6.3.	Սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջներն ապահովելու և վերահսկելու նպատակով սարքավորումները, ըստ անհրաժեշտության, ապահովված են համապատասխան չափիչ և (կամ) ստուգիչ սարքերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 41-րդ կետ	
7.	ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ						
7.1.	Տրանսպորտային միջոցների և (կամ) բեռնարկղերի բեռնախցիկները չեն օգտագործվում սննդամթերքից բացի այլ ապրանք փոխադրելու համար, եթե դա կարող է առաջացնել սննդամթերքի աղտոտում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 34-րդ կետ	

7.2.	Ըստ անհրաժեշտության տրանսպորտային միջոցները և (կամ) բեռնարկղերն ապահովված են սննդամթերքը համապատասխան ջերմաստիճանում պահպանող և այդ ջերմաստիճանի պահպանումը վերահսկող սարքերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 39-րդ կետ	
7.3.	Փոխադրման ընթացքում սննդամթերքն ուղեկցող, ինչպես նաև բարձող և բեռնաթափող անձինք պահպանում են անձնական հիգիենայի կանոնները և կրում են համապատասխան մաքուր հագուստ, անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանիչ հագուստ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 54-րդ կետ	
7.4.	Բազմակի օգտագործման փաթեթավորման նյութերն ու բեռնարկղերը հեշտությամբ մաքրվող և ախտահանվող են				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 68-րդ կետ	
7.5.	Փաթեթավորման համար օգտագործվող նյութերը բավարարում են տեխնիկական կանոնակարգերի պահանջները և չեն հանդիսանում սննդամթերքի աղտոտման աղբյուր				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 65-րդ կետ	
7.6.	Մթերքը պահվում է փչացումը բացառող պայմաններում՝ դրա մակնշմանը համապատասխան, կարագը, հալած յուղը և սննդային այլ ճարպերն ու հոտ կլանող մթերքը չեն պահվում սուր հոտ ունեցող մթերքի հետ համատեղ, պարենահումքը (հում մթերք) և օգտագործելու համար նախատեսված պատրաստի սննդամթերքը պահվում է առանձին սառցախցիկներում, իսկ եթե սառցախցիկում հում և պատրաստի սննդամթերքը պահվում է համատեղ՝ պահպանելով սննդամթերքի պահման թույլատրելի հարևանությունը և բացառելով դրանց անմիջական հպումը (հում մթերքն անհրաժեշտ է պահել սառնարանի ստորին, իսկ պատրաստին՝ վերին դարակների վրա)				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 58-րդ, 59-րդ, 61-րդ և 64-րդ կետեր	
7.7.	Կենդանական ծագման սննդամթերքը (գյուղատնտեսական թռչնի ձու, թռչնի միս, միս, թարմ ձուկ, կաթնամթերք) ընդունվում է միայն անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի առկայության դեպքում				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս	
7.8.	Կենդանական ծագման սննդամթերքը ենթարկված է անասնաբուժասանիտարական փորձաքննության				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մաս	
7.9.	Պիտանիության ժամկետն անցած սննդամթերք չի իրացվում				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետ	
8.	ՀՈՒՄՔԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ						
8.1.	Ընդունվող ամբողջ հումքը և սննդամթերքն ուղեկցվում են անվտանգությունը և որակը հաստատող փաստաթղթերով				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս	
8.2.	Հալեցումն իրականացվում է անվտանգության պայմանների ապահովմամբ և հալեցված միս, մսամթերքը կրկնակի անգամ չի սառեցվում				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 63-րդ	

						կետ	
8.3.	Աղցանները և կիսապատրաստվածքները (պատրաստի խճողակը) անմիջապես պաղեցվում և պահվում են տվյալ տեսակին հատուկ վտանգը բացառող ջերմաստիճանում և չեն օգտագործվում հաջորդ օրը				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 62-րդ և 63-րդ կետեր	
9.	ԿԻՍԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ, ԽՈՂԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՈՒՄ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ						
9.1.	Պատրաստի ճաշատեսակները, աղցանները, դոնդոլները, խավարտները չեն իրացվում պիտանիության ժամկետն անց (պատրաստման հաջորդ օրը)				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մաս, 10-րդ մասի 1-ին կետ	
9.2	Իրացվող սննդամթերքը և պարենահումքը վնասված չեն, ունեն ԼՂՀ օրենսդրությամբ պահանջվող հայերեն մակնշում, բացառությամբ հանրային սննդի ոլորտում արտադրվող և տեղում իրացվող սննդամթերքի վրա				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 9-րդ մասեր	

»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 773-Ն որոշման

«Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի
N 181-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N
ԻՐԱՅՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳՐԵՐ՝ 46.3, 47.1, 47.2, 47.8)**

_____ 20 թ

_____ (ծառայության ստորաբաժանման անվանումը)

_____ (գտնվելու վայրը)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ավարտը՝ _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման հիմքը՝ _____
(ստուգման տարեկան ծրագիրը, դիմում-բողոքը և այլն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

(ՀՎՀՀ)

_____ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի
ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (ստուգվող օբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

Ստուգման հրամանի համարը՝ _____ ամսաթիվը _____

Ստուգման նպատակը (ընդգրկված հարցերի համարները) _____

Տեղեկատվական բնույթի հարցեր

Հ/Հ	Հարցը	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված)	
2.	Պետական գրանցման (հաշվառման) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
3.	Պետական գրանցման (հաշվառման) վկայականի համարը	
4.	Իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը	
5.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
6.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ	
7.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության օբյեկտի տեսակները՝ գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկա, առևտրի կենտրոն (սուպերմարկետ), այլ առևտրի օբյեկտ՝ բացօթյա առևտուր, խանութ, կրպակ ցուցահանդես-վաճառք, տոնավաճառ (վերնիսաժ) և դրանցում իրականացվող սննդի արտադրություններ	
8.	Տնտեսավարող սուբյեկտների և դրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
9.	Տնտեսավարող սուբյեկտի առևտրի իրացման վայրի գործունեության օբյեկտի տեսակը՝ գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկա, առևտրի կենտրոն (սուպերմարկետ), այլ առևտրի օբյեկտ՝ բացօթյա առևտուր, խանութ, կրպակ ցուցահանդես-վաճառք, տոնավաճառ (վերնիսաժ)	
10.	Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունը սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
11.	Առևտրի իրացման վայրի՝ օբյեկտի մակերեսը	
12.	Ներդրված որակի կառավարման համակարգը	
13.	Աշխատողների թիվը	
14.	<p>ա) Մեծածախ առևտրի կետեր և վերափաթեթավորող կազմակերպություններ, որոնք իրականացնում են ապափաթեթավորում և նորից փաթեթավորում (չափածրարում)</p> <p>բ) Աղցանների պատրաստում՝ չփաթեթավորված հանրային սննդի կամ սուպերմարկետների համար</p> <p>գ) Հում ձկան և ձկնամթերքի վաճառք</p> <p>դ) Սուպերմարկետներ, որտեղ կատարվում են փաթեթավորում և ապափաթեթավորում</p> <p>ե) Խանութներ, որոնք վաճառում են չփաթեթավորված սննդամթերք (այլուր, հրուշակեղեն, չոր մրգեր, սերմեր, սոյայի արտադրանք և այլ տեսակի անվտանգ արտադրանք)</p> <p>զ) Մսի խանութներ, սուպերմարկետներ, եթե կա մսի բաժին</p> <p>է) Թարմ միրգ և բանջարեղեն, պահածոյացված և երկարաժամկետ պահման համար նախատեսված մթերք</p> <p>ը) Նպարեղեն և կրպակներում վաճառվող՝ միայն նախապես փաթեթավորված սնունդ</p>	

Վերահսկողական բնույթի հարցեր

Հ/Հ	Հարցերը	Այո	Ոչ	Չ/Պ	Ստուգման եղանակը	Նորմատիվ ակտի համարը	Մեկնաբանություններ
1	2	3	4	5	6	7	8
1.	ՎԱՃԱՌՔԻ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԿԵՆՏՐԱԿԱՅԻՆ ՍԵՆՔԵՐ						
1.1.	Արտադրական, առևտրի, օժանդակ, կենցաղային սենքերը պահվում են մաքուր, նորոգ և պատշաճ վիճակում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 24-րդ կետ	
1.2.	Բոլոր սենքերը տեղակայված են՝ հաշվի առնելով հոսքայնությունը՝ հումքի, պատրաստի սննդամթերքի, անձնակազմի և հաճախորդների հանդիպակաց ուղիների ու խաչվելու բացառումը: Ապահովված են հիգիենիկ պատշաճ գործելակերպի իրականացումը, ներառյալ՝ գործընթացների ընթացքում և դրանց միջև ընկած ժամանակահատվածում խաչաձև աղտոտումից պաշտպանումը				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 27-րդ կետ	
1.3.	Ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից պարենային առևտրի օբյեկտի հարակից տարածքում պարենային ապրանքներից իրացվում է միայն պաղպաղակ, ջուր, այդ թվում՝ հանքային, հյութեր և զովացուցիչ ըմպելիքներ				ակնադիտական զննում	«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 5՝ հոդվածի 2-րդ մաս	
1.4.	Սննդամթերքի բաժիններն ապահովված են սառնարանային սարքավորումներով՝ սննդամթերքի՝ պահանջվող ջերմային ռեժիմում պահման համար				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 61-րդ կետ	
1.5.	Պարենային առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրում, որտեղ կատարվում է նաև ոչ պարենային ապրանքների վաճառք, վաճառքը և պահպանումը կատարվում են ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում				ակնադիտական զննում	«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մաս և 5-րդ հոդվածի 3-րդ մաս	
1.6.	Նախատեսված են համապատասխան տարածքներ՝ անհրաժեշտ հարմարություններով՝ աշխատանքային գործիքների և պարագաների լվացման, փխտահանման և պահման համար, ունենան սառը և տաք ջրամատակարարում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 28-րդ կետ	
1.7.	Պարենային առևտրի օբյեկտները և առևտրի իրականացման վայրն ապահովված են կենցաղային տարածքներով (սանհանգույց՝ ձեռքերի լվացման և փխտահանման համար տեղադրված են լվացարաններ՝ հոսող ջրով, օճառով, էլեկտրաչորացուցիչներով և (կամ) սրբիչով, փխտահանիչ լուծույթով, կախիչներով, հանդերձարան, որտեղ հագուստը, պաշտպանիչ հագուստը և կոշիկները պահվում են առանձին				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 2-րդ և 6-րդ ենթակետեր	
1.8.	Սննդամթերքի փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներն ապահովվում են սննդամթերքի որակական հատկությունների պահպանությունը, դրա փաթեթավորման անվանատվությունը և աղտոտումից պաշտպանումը՝ սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան				ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մաս	
2.	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ						

	ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ					
2.1.	Կազմակերպությունն ապահովված է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով, խմելու ջրի անխափան (պահուստային տարողությունների առկայություն) ջրամատակարարմամբ			ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 47-րդ և 50-րդ կետեր	
3.	ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ					
3.1.	Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական և (կամ) արհեստական լուսավորվածությամբ			ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 4-րդ ենթակետ	
3.2.	Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական օդափոխության պայմաններով և (կամ) արհեստական օդափոխության համակարգերով			ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 3-րդ ենթակետ	
4.	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ					
4.1.	Սննդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկվել է պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների, որոնց փաստաթղթավորված ապացույցները (անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթողյալ տրելու մասին որոշում) պահվում են փաստաթղթերի հետ, տնտեսավարողի մոտ			փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 56-րդ կետ	
4.2.	Սննդամթերքի հետ անմիջական շփվող յուրաքանչյուր անձ պահպանում է անձնական հիգիենայի կանոնները և կրում է համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում պաշտպանիչ հագուստ			ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 54-րդ կետ	
5.	ՄԻՋԱՏՆԵՐԻ ԵՎ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ					
5.1.	Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ կենդանիների (ճանճեր, միջատներ, ուտիճներ, վնասատուներ, կրծողներ)՝ սննդամթերքի պատրաստման, մշակման, պահման և տեղափոխման տարածքներ մուտքը կանխելու, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ			ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 60-րդ կետ	
6.	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ					
6.1.	Ապահովված են աղբարկղերով, որոնք անջրաթափանց, կափարիչներով փակվող կուտակիչ տարողություններ են, գտնվում են նորոգ վիճակում և տեղակայված են հնարավորինս պատշաճ հեռավորության վրա			ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 44-րդ և 45-րդ կետեր	
7.	ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ					
7.1.	Ապահովված է անհրաժեշտ վաճառատեխնոլոգիական գույքով՝ կախված սննդամթերքի տեսակից ու քանակից, որոնք պատրաստված են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերի պահանջները բավարարող համապատասխան նյութերից և			ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետ	

	պահվում են նորոգ ու բարվոք վիճակում						
7.2.	Սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, ենթարկում են պատշաճ մաքրման ու ախտահանման				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետ	
7.3.	Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի առանձնահատկություններից՝ առևտրի օբյեկտն ապահովված է տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 41-րդ կետ, «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մաս	
8.	ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ						
8.1.	Սննդամթերքը պահպանում են դրանց փչացումը և աղտոտումը կանխարգելող պայմաններում (ջերմաստիճանում)					ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 58-րդ և 61-րդ կետեր	
8.2.	Առևտրի ցանց մտնող պարենային հումքը և սննդամթերքն ուղեկցվում են արտադրողի կողմից տրված՝ անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով				փաստաթղթային և ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս	
9.	ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՎԱՃԱՌՔ						
9.1.	Չի կատարվում պիտանիության ժամկետը լրացած սննդամթերքի վերափաթեթավորում և իրացում որպես սննդամթերք				ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի, 9-րդ հոդվածի 6-րդ մաս	
9.2.	Կիսապատրաստվածքը և սննդամթերքը, որոնցում հնարավոր է ախտածին մանրէների բազմացում կամ թունավոր նյութերի առաջացում, պահվում են դրանց առաջացումը կամ բազմացումը բացառող ջերմաստիճանում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 61-րդ կետ	
9.3.	Փաթեթավորման (չափածրարում) գործընթացները կատարվում են սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում՝ ապահովելով փաթեթավորման ամբողջականությունն ու մաքրությունը				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 67-րդ կետ	
9.4.	Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջղի պիտակների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը (նետոտ), մեկ կիլոգրամի և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանիության ժամկետը				ակնադիտական զննում	«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մաս	
9.5.	Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս՝ փաթեթավորման համար օգտագործվող նյութերը բավարարում են տեխնիկական կանոնակարգերի պահանջները (ամուր են, մաքուր, չոր, առանց կողմնակի հոտի և ամբողջականությունը չխախտված)				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 65-րդ կետ	
9.6.	Վաճառվող հացի գնապիտակի վրա				ակնադիտական	«Առևտրի և	

	առկա է հացի անվանման, այլուրի տեսակի, քաշի և թույլատրելի շեղումների չափի նշումը, և չփաթեթավորված հացի համար առկա են տեղեկատվական թերթիկներ				զննում	ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մաս	
9.7.	Կրպակներում չեն վաճառվում պարտադիր ջերմային ռեժիմով տեղափոխում և պահում պահանջող սննդամթերք (բացառությամբ պաղպաղակի, զովացուցիչ ջրերի և գարեջրի, որոնց տեղափոխումը և պահումը կատարվում են դրանց տեղափոխման և պահման համար նախատեսված հատուկ սառնարաններում), չափափորձարկում պահանջող ապրանքներ				ակնադիտական զննում	«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ մաս	
9.8.	Կրպակներում վաճառվում են միայն արտադրական կշռափաթեթավորում ունեցող և հատային ապրանքներ				ակնադիտական զննում	«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ մաս	
9.9.	Իրացվող սննդամթերքը և պարենահումքը վնասված չեն, ունեն ԼՂՀ օրենսդրությամբ պահանջվող հայերեն մակնշում՝ ըստ սահմանված ձևի և բովանդակության				ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասեր	
9.10.	Չի իրացվում սննդամթերք՝ տեղեկակրի վրա զետեղված տեղեկությունների փոփոխությամբ				ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մաս	
9.11.	Կենդանական ծագման սննդամթերքը (թոչնի ձու, միս, մսամթերք, թարմ ձուկ, կաթ, կաթնամթերք) ենթարկված է անասնաբուժասանիտարական փորձաքննության				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մաս	
9.12.	Չի իրացվում ներմուծված սննդամթերք, որի հայերեն մակնշումը փակցված է արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մաս	
9.13.	Չեն իրացվում վտանգավոր և կեղծված սննդամթերք, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող վտանգավոր և կեղծված նյութեր, պեստիցիդների և ագրոքիմիկատների մնացորդային առավելագույն քանակը գերազանցող բուսաբուժական մթերքներ				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մաս, «Բուսասանիտար իայի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	
9.14.	Չի իրացվում սննդամթերք, որի՝ ա) պիտանիության ժամկետն անցած է. բ) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է կամ ընթեռնելի չէ. գ) ժամկետը կրկնակի մակնշված է կամ բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված է և նշված է պիտանիության նոր ժամկետ				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մաս	

»:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 773 -Ն որոշման

«Հավելված N 3
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի
N 181-Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N
ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10.1)

_____ 20 թ

_____ (ծառայության ստորաբաժանման անվանումը)

_____ (գտնվելու վայրը)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

--	--	--	--	--

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

--	--	--	--	--

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

--	--	--	--	--

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ավարտը՝ _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման հիմքը՝ _____
(ստուգման տարեկան ծրագիրը, դիմում-բողոքը և այլն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

--	--	--	--	--	--	--	--

(ՀՎՀՀ)

_____ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի
ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (ստուգվող օբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

Ստուգման հրամանի համարը՝ _____ ամսաթիվը _____

Տեղեկատվական բնույթի հարցեր		
Հ/Հ	Հարցը	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված)	
2.	Պետական գրանցման (հաշվառման) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
3.	Պետական գրանցման (հաշվառման) վկայականի համարը	
4.	Իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը	
5.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը կապի այլ միջոցներ)	
6.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ	
7.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները	
8.	Տնտեսավարող սուբյեկտների և դրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
9.	Տեղեկություններ լիցենզիայի մասին (տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը)	
10.	Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունը սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
11.	Ապրանքային նշանի, հանրահայտ ապրանքային նշանի առկայության մասին տեղեկություն	
12.	Ներդրված որակի կառավարման համակարգը (եթե առկա են ISO 9001, HACCP, ISO 22000, ISO 14000)	
13.	Մեկ օրում հերթափոխի թիվը	
14.	Աշխատողների թիվը, նրանցից անմիջապես արտադրությունում աշխատողների թիվը	
15.	Թողարկվող արտադրատեսակները՝ անվանացանկով, այդ թվում՝ հատուկ նշանակության սննդամթերքի արտադրության	

Վերահսկողական բնույթի հարցեր

Հ/Հ	Հարցերը	Այո	Ոչ	Չ/Պ	Ստուգման եղանակը	Նորմատիվ ակտի համարը	Մեկնաբանություններ
1	2	3	4	5	6	7	8
1.	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՆՔԵՐ						
1.1.	Տեխնոլոգիական գործընթացը կազմակերպված է այնպես, որպեսզի բացառվի հումքի և կիսապատրաստվածքների հանդիպակաց հոսքը պատրաստի սննդամթերքի հետ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 27-րդ կետ	
1.2.	Արտադրական, օժանդակ, կենցաղային սենքերը պահվում են մաքուր և նորոգ վիճակում, ունեն խոնավ մաքրման և ախտահանման հնարավորություն, հատակն առանց ճեղքերի է՝ ծածկված անջրաթափանց նյութերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 24-րդ կետ և 27-րդ կետի 1-ին ենթակետ	
1.3.	Արտադրական տարածքներն ապահովված են ձեռքերը լվանալու համար նախատեսվող լվացարաններով, որոնք ապահովված են մշտապես հոսող սառը և տաք ջրով, օճառով, ախտահանման միջոցներով և չորացման հիգիենիկ սարքերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 2-րդ ենթակետ	
1.4.	Սենքերն ապահովված են լվացող և ախտահանիչ նյութերով, որոնք պահվում են սննդամթերքից առանձնացված պահման տարածքում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 7-րդ ենթակետ	
1.5.	Կենցաղային սենքն ապահովված է հանդերձարաններով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 6-րդ ենթակետ	
1.6.	Սանհանգույցների նախամուտքերում ձեռքերի լվացման և ախտահանման համար տեղադրված են լվացարաններ, որոնք ապահովված են տաք և սառը ջրով, օճառով, էլեկտրաչորացուցիչներով, ախտահանիչ լուծույթով, սանհագուստը կախելու համար կախիչներով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետ	
2.	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՅՈՒՄ						
2.1	Կազմակերպությունն ապահովված է ջրամատակարարմամբ և ջրահեռացմամբ, խմելու ջրի անխափան (պահուստային տարողությունների առկայություն) ջրամատակարարմամբ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 47-րդ և 50-րդ կետեր	
3.	ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՕՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ						
3.1.	Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական և (կամ) արհեստական լուսավորվածությամբ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 4-րդ	

						ենթակետ	
3.2.	Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական օդափոխության պայմաններով և (կամ) արհեստական օդափոխության համակարգերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 3-րդ ենթակետ	
4.	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ						
4.1.	Սննդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկվել է պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների, որոնց փաստաթղթավորված ապացույցները (անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշում) պահվում են տնտեսավարողի մոտ				ակնադիտական և փաստաթղթային ձևում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 56-րդ կետ	
4.2.	Սննդի շղթայում ներգրավված յուրաքանչյուր անձ պահպանում է անձնական հիգիենայի կանոնները և կրում է համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում պաշտպանիչ հագուստ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 54-րդ կետ	
5.	ՄԻՋԱՏՆԵՐԻ ԵՎ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐ						
5.1.	Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ կենդանիների (ճանճեր, միջատներ, ուտիճներ, վնասատուներ, կրծողներ)՝ սննդամթերքի պատրաստման, մշակման, պահման և տեղափոխման տարածքներ մուտքը կանխելու, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ				ակնադիտական և փաստաթղթային ձևում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 60-րդ կետ	
6.	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ						
6.1.	Ապահովված են աղբարկղերով և աղբի հավաքման համար տեղադրված են անջրաթափանց, կափարիչներով փակվող կուտակիչ տարողություններ և գտնվում են նորոգ վիճակում ու տեղակայված են հնարավորինս պատշաճ հեռավորության վրա				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 44-րդ և 45-րդ կետեր	
7.	ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ						
7.1.	Բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ կառուցված են հիգիենայի պահանջները բավարարող նյութերից և պահվում են նորոգ ու բարվոք վիճակում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետ	
7.2.	Բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, ենթարկվում են պատշաճ մաքրման ու ախտահանման				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետ	
7.3.	Բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, տեղակայված են սարքավորման և դրա շրջակայքի պատշաճ մաքրության հնարավորությունն ապահովող տեղում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 4-րդ ենթակետ	
7.4.	Սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջներն ապահովելու և վերահսկելու նպատակով սարքավորումները, ըստ անհրաժեշտության, ապահովված են				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման	

	համապատասխան չափիչ և (կամ) ստուգիչ սարքերով					հավելվածի 41-րդ կետ	
8.	ՀՈՒՄԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՓՈՆԱԴՐՈՒՄ, ՄԱԿՆՇՈՒՄ ԵՎ ՊԱՀՈՒՄ						
8.1.	Տեղական արտադրության և ներմուծվող միսը վերամշակման է ընդունվում միայն անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայությամբ				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 15-րդ կետ	
8.2.	Միսը և մսամթերքը պահվում են արևի ճառագայթների ուղիղ ազդեցությունից պաշտպանված, հողի մակերևույթից առնվազն 50 սմ բարձր հատակ ունեցող, չոր, մաքուր, (60°10) տոկոս օդի հարաբերական խոնավություն ունեցող փակ շենքերում, սառնարանային ջերմաստիճանում, ջեռուցման կամ սառեցնող սարքերից առնվազն 1 մ հեռավորության վրա				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 71-րդ կետ	
8.3.	Արտադրությունում օգտագործվող սննդային հավելումները ներառված են տվյալ սննդամթերքի տեսակի արտադրության համար թույլատրելի սննդային հավելումների ցանկում և ապահովում են տեխնիկական կանոնակարգի պահանջները: Արտադրությունում կիրառվող սննդային հավելումները պահվում են գործարանային փաթեթներում և ունեն պիտակներ				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 19.04.2013թ. N 191-Ն որոշում, ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 38-րդ կետ	
8.4.	Հումքը, բաղադրիչները, կիսապատրաստվածքը և վերջնական արտադրանքը, որոնցում հնարավոր է ախտածին մանրէների բազմացում կամ թունավոր նյութերի առաջացում, պահվում են դրանց առաջացումը կամ բազմացումը բացառող ջերմաստիճանում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 61-րդ կետ	
8.5.	Անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքներով պայմանական պիտանի ճանաչված միսը և մսամթերքը վարակազերծվում են հատուկ շինություններում, որտեղ առկա են էլեկտրական և գազի վառարաններ, կաթսաներ, ավտոկլավներ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 16-րդ կետ	
8.6.	Սննդամթերքի փաթեթավորման համար օգտագործվող նյութերը բավարարում են տեխնիկական կանոնակարգերի պահանջները և պահվում են աղտոտման վտանգը բացառող պայմաններում, չեն հանդիսանում սննդամթերքի աղտոտման աղբյուր				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 65-րդ և 66-րդ կետեր	
8.7.	Փաթեթավորման գործընթացները կատարվում են սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում՝ ապահովելով փաթեթավորման ամբողջականությունն ու մաքրությունը				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 67-րդ կետ	
8.8.	Բազմակի օգտագործման փաթեթավորման նյութերն ու բեռնարկղերը հեշտությամբ մաքրվող և ախտահանվող են				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 68-րդ կետ	
8.9.	Մսի կամ մսամթերքի փաթեթավորման կամ դրան փակցված պիտակի վրա կատարված հստակ և ընթեռնելի մակնշվածքը պարունակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված տեղեկատվությունը՝ հայերենով:				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասեր, ԼՂՀ	

						կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 59-րդ կետ	
8.10	Մսամթերքի փոխադրումն իրականացվում է հատուկ մասնագիտացված փոխադրամիջոցներով, որոնք ունեն ստոեցվող կամ հավասարաջերմ թափք և չեն օգտագործվում ոչ պարենային ապրանքների տեղափոխման համար				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 34-րդ և 39-րդ կետեր	
8.11	Մսնդամթերքի փոխադրման տրանսպորտային միջոցները և (կամ) բեռնարկղերը պահվում են մաքուր և նորոգ վիճակում, որպեսզի կանխարգելի սննդամթերքի աղտոտումը և ապահովվի պատշաճ մաքրման և ախտահանման իրականացումը				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 33-րդ կետ	
8.12	Մսամթերքը տեղափոխվում է մաքուր, սննդամթերքի հետ անմիջական շփման համար նախատեսված նյութերից պատրաստված տարաներով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 70-րդ կետ	
8.13	Տրանսպորտային միջոցներով չեն փոխադրվում միաժամանակ սննդային և ոչ սննդային սպառողական ապրանքներ: Մսի և մսամթերքի փոխադրման ժամանակ կիրառվում են բոլոր միջոցները՝ դրանց աղտոտումը բացառելու կամ ամբողջականությունն ապահովելու համար				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 34-րդ կետ, ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 73-րդ կետ	
9.	ՀՈՒՄԲԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ՄՍԻ ԵՎ ՄԱՍԻԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ						
9.1.	Առկա են ներկրված մսի և մսամթերքի անվտանգությունը հավաստող սերտիֆիկատներ				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 74-րդ կետ	
9.2.	Տեղական արտադրության և ներմուծվող միսը վերամշակման է ընդունվում միայն անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի առկայությամբ՝ անասնաբուժասանիտարական փորձաքննությունից հետո				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 15-րդ կետ	
9.3.	Ընդունվող հումքը համապատասխանում է անվտանգության պահանջներին և ունի անվտանգությունը հավաստող (հիմնավորող) փաստաթուղթ				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս	
9.4.	Օժանդակ և փաթեթավորող նյութերը, տարաները համապատասխանում են անվտանգության պահանջներին և ունեն անվտանգությունը հավաստող (հիմնավորող) փաստաթղթեր				ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	
9.5.	Սննդային հավելումները, կենսաբանական ակտիվ նյութերը, նիտրիտները, գունավորման պիգմենտները և խառնուրդները համապատասխանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված անվտանգության չափանիշներին և թույլատրված են սննդում օգտագործման համար				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 38-րդ կետ	

10.	ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ					
10.1	Յուրաքանչյուր տեխնիկական գործընթացի համար տեխնիկական կանոնակարգով սահմանվում են՝ ա) տեխնոլոգիական գործողության հերթականությունը և ռեժիմները, բ) անվտանգ արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ միջոցների ու մեթոդների ապահովումը, գ) տեխնոլոգիական գործընթացի պարամետրերի չափումը, հսկումը և կանոնավորումը, դ) կրիտիկական կետերի հսկումը և ռիսկի վերլուծությունը, ե) հումքի կազմը, ակտիվ թթվությունը, մանրէաբանական ցուցանիշները, զ) մթերքի երաշխիքային պիտանիության ժամկետը, եթե պահպանվում են պահման ռեժիմները				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 43-րդ կետ
10.2	Մսի և մսամթերքի արտադրությունն իրականացվում է արտադրողի կողմից սահմանված տեխնոլոգիական հրահանգին ու տվյալ արտադրատեսակի պատրաստման բաղադրագրին համապատասխան:				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 23-րդ կետ
10.3	Տեխնոլոգիական հրահանգներով և բաղադրագրերով սահմանված ցուցանիշները, նորմերը, բնութագրերը, տեխնոլոգիական գործելակարգերը (ռեժիմները) և տեխնոլոգիական գործընթացների կատարման կարգը չի հակասում տվյալ սննդամթերքի և դրա արտադրության գործընթացում օգտագործվող հումքի, նյութերի, տարայի և փաթեթավորման նյութերի նորմատիվ իրավական ակտերով և (կամ) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի 23-րդ կետ, ԼՂՀ կառավարության 26.11.2007թ. N 517 որոշման հավելվածի 5-րդ կետ
11.	ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ					
11.1.	Իրականացվում է մսի և մսամթերքի մեջ թունավոր տարրերի, հակաբիոտիկների և պեստիցիդների նորմատիվների հսկողություն՝ լաբորատոր փորձաքննության միջոցով				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի N 1 աղյուսակ
11.2.	Իրականացվում է մսի և մսամթերքի լաբորատոր հսկողություն մանրէաբանական ցուցանիշներով				ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26.06.2007թ. N 261 որոշման հավելվածի N 2 աղյուսակ

»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված N 4
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 773 -Ն որոշման

«Հավելված N 4
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի
N 181-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10.5)**

_____ 20 թ

_____ (ծառայության ստորաբաժանման անվանումը)

_____ (գտնվելու վայրը)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (անձնական ծածկագիրը)

_____ (պաշտոնը)

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ավարտը՝ _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման հիմքը՝ _____
(ստուգման տարեկան ծրագիրը, դիմում-բողոքը և այլն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

(ՀՎՀՀ)

_____ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի
ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

_____ (ստուգվող օբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները)

_____ (հեռախոսահամարը (ֆաքսը), էլ. հասցեն)

Ստուգման հրամանի համարը՝ _____ ամսաթիվը _____

Ստուգման նպատակը (ընդգրկված հարցերի համարները) _____

Տեղեկատվական բնույթի հարցեր		
Հ/Հ	Հարցը	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված)	
2.	Պետական գրանցման (հաշվառման) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
3.	Պետական գրանցման (հաշվառման) վկայականի համարը	
4.	Իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը	
5.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
6.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ	
7.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները	
8.	Տնտեսավարող սուբյեկտների և դրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
9.	Տեղեկություններ լիցենզիայի մասին (տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը)	
10.	Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունը սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
11.	Ապրանքային նշանի, հանրահայտ ապրանքային նշանի առկայության մասին տեղեկություն	
12.	Ներդրված որակի կառավարման համակարգը (եթե առկա են ISO 9001, HACCP, ISO 22000, ISO 14000)	
13.	Աշխատողների թիվը, նրանցից անմիջապես արտադրությունում աշխատողների թիվը	
14.	Թողարկվող արտադրատեսակները՝ անվանացանկով, այդ թվում՝ հատուկ նշանակության սննդամթերքի արտադրության	

Վերահսկողական բնույթի հարցեր

Հ/Հ	Հարցերը	Այո	Ոչ	Չ/Պ	Ստուգման եղանակը	Նորմատիվ ակտի համարը	Մեկնաբանություններ
1	2	3	4	5	6	7	8
1.	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԿԵՆՑԱԴԱՅԻՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՆՔԵՐ						
1.1.	Տեխնոլոգիական գործընթացը կազմակերպված է այնպես, որպեսզի բացառվի հումքի և կիսապատրաստվածքների հանդիպակաց հոսքը պատրաստի սննդամթերքի հետ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 27-րդ կետ	
1.2.	Արտադրական, օժանդակ, կենցաղային սենքերը պահվում են մաքուր և նորոգ վիճակում, ունեն խոնավ մաքրման և ախտահանման հնարավորություն, հատակն առանց ճեղքերի է՝ ծածկված անջրաթափանց նյութերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 24-րդ կետ և 27-րդ կետի 1-ին ենթակետ	
1.3.	Արտադրական տարածքներն ապահովված են ձեռքերը լվանալու համար նախատեսվող լվացարաններով, որոնք ապահովված են մշտապես հոսող սառը և տաք ջրով, օճառով, ախտահանման միջոցներով և չորացման հիգիենիկ սարքերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 2-րդ ենթակետ	
1.4.	Մաքրման գույքը և լվացող ու ախտահանիչ նյութերը պահվում են արտադրական տարածքից դուրս առանձնացված տարածքում				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 7-րդ ենթակետ	
1.5.	Կենցաղային սենքն ապահովված է հանդերձարաններով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 6-րդ ենթակետ	
2.	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՇԵՌԱՑՈՒՄ						
2.1.	Կազմակերպությունն ապահովված է ջրամատակարարմամբ և ջրահեռացմամբ, խմելու ջրի անխափան (պահուստային տարողությունների առկայություն) ջրամատակարարմամբ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 47-րդ և 50-րդ կետեր	
3.	ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ						
3.1.	Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական և արհեստական լուսավորվածությամբ				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 4-րդ ենթակետ	
3.2.	Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական օդափոխության պայմաններով և արհեստական օդափոխության համակարգերով				ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետի 3-րդ ենթակետ	

4	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ					
4.1.	Մենդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկվել է պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների, որոնց փաստաթղթավորված ապացույցները (անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշում) պահվում են ներքին փաստաթղթերի հետ տնտեսավարողի մոտ			փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 56-րդ կետ	
4.2.	Յուրաքանչյուր անձ պահպանում է անձնական հիգիենայի կանոնները և կրում է համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում պաշտպանիչ հագուստ			ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 54-րդ կետ	
5.	ՄԻՋԱՏՆԵՐԻ ԵՎ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՏԱՐԿՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ					
5.1.	Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ կենդանիների (ճանճեր, միջատներ, ուտիճներ, վնասատուներ, կրծողներ) սննդամթերքի պատրաստման, մշակման, պահման և տեղափոխման տարածքներ մուտքը կանխելու, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ			ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 60-րդ կետ	
6.	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ					
6.1.	Ապահովված են մնացորդների պահման և հեռացման պատշաճ հիգիենիկ պայմաններով՝ աղբարկղերը և աղբի հավաքման համար տեղադրված են անջրաթափանց, կափարիչներով փակվող կուտակիչ տարողություններ, գտնվում են նորոգ վիճակում և տեղակայված են հնարավորինս պատշաճ հեռավորության վրա			ակնադիտական զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 44-րդ և 45-րդ կետեր	
7.	ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ					
7.1.	Բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ կառուցված են հիգիենայի պահանջները բավարարող նյութերից և պահվում են նորոգ ու բարվոք վիճակում			ակնադիտական և փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 50-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետ	
